# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## «ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
### փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ.( 374 10) 73 98 30, 28 06 69,
ֆաքս (374 10) 28 06 69, էլ. փոստ anpp@anpp.am

№ 40-305

"26" 03 2015թ.

«ՀԱԷԿ-ՇՀԱՊՁԲ-11/6» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում
կատարելու
ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

«ՀԱԷԿ-ՇՀԱՊՁԲ-11/6» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ծեռքբերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքը՝ ավտոյուղեր:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիրն է հանդիսանում «ՀԱԷԿ-ՇՀԱՊՁԲ-11/6»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, կայանի վարչական շենք հասցեով, 3-րդ հարկ, N 311 սենյակ մինչև 2015թ. ապրիլի 07-ը, ժամը 11:00-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Գայանե Ձեյնալյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն «ՀԱԷԿ» ՓԲԸ վարչական շենքում, ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, կայանի վարչական շենք հասցեով, 3-րդ հարկ, N 311 սենյակ 2015 թվականի ապրիլի 07-ին, ժամը 11:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում «ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար ավտոյուղերի մատակարարումը:

«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար՝ ավտոյուղերի մատակարարման (որը կազմված է 7 չափաբաժիններից) տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N 1.1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (հավելված N5), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (հավելված N5.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ՀԱԷԿ-ՇՀԱՊՁԲ-11/6» ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրերի նախագիծը:
Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:
«ՀԱԷԿ» ՓԲԸ էլեկտրոնային փոստի հասցեն է՝ anpp@ anpp.am:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,

նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Առդիր 13 էջ:

Գլխավոր տնօրենի ժ/Պ՝ [signature] Մ.Վարդանյան

Կատարող՝ Գ.Զեյնալյան
Հեռ. 28-23-59